

երևակայելով: Թէ ժառեր են տեղից շարժում և համայն մարդկութիւնը հիացնում իրանց ուժով և հարկէ, Մենաւորը տեսնելով այդ հսկաներին, կը զգաւ իւր տկարութիւնը և նախանձից կը տրաքի:

Խըտուած ճահճի վայնասունը ասում է և մի ուրիշ բան. այն է, որ ես ամբողջ հալ գրականութիւնն եմ աշխատել մրտտել: Եւ իմ անցեալ լօղուածը կարդացել է, գիտէ, թէ իմ խօսքն ում էր ուղղուած: Բայց ճահճը վերագրում է ամբողջ գրականութեանը այն, ինչ որ միայն իւր համար է ասուած: Ինչո՞ւ: Որովհետեւ ճահճը թէև ճահճի է, բայց իրան ծով է համարում, որովհետև իւր հիւանդոտ երևակալութեամբ կարծում է թէ ինքն է միայն և՛ գրականութիւն և՛ մամուլ, և՛ ազգի պարծանք, և՛ համայն հայկական կեանքի միակ առանցքը: Նա չէ ուղում խոստովանել, որ իւր նեխուած տղմի մէջ չեն մտել և երբէք չեն մտնիլ Աղալեանց, Արասխանեանց, Փափազեանց, Յովհաննէս Թումանեան, Վանցեան, Լևոն Մանուէլեան և ուրիշ շատերը, չխօսելով միւսնների մասին, որոնք ճահճի անունը լսել անգամ չեն ուզում: Ճահճը չի ուզում նկատել, որ նոյն իսկ իւր շուրջը պտտող գրական անձինք գաղտնի նողկանքով են նայում նրա պղտորուած ջրին և ով աւելի մաքրասէր է, շտապում է փախչել ու հեռանալ:

Եւ դուք, ով խեղճեր, այս բոլորից լետող ինձ ասում էք, թէ նախանձում եմ և արաքում: Ես միայն մի բանի եմ նախանձում— ձեր երեսի կաշուին: Այդ իրաւ որ նախանձելու բան է:

Մի կէտ ևս կար ճահճի գորտային կռկռոցի մէջ—ակնարկ Վարդապետական Ընկերութեան բեմի վրայ անցեալ 1902 թուականին ներկայացուած մի հալերէն նոր ինքնուրոյն պիէսի» մասին:

Ակնարկում է պ. Շիրվանզադէի «Ունէ՞ր իրաւունք» դրաման, որ ամբողջ երկու ամիս հայրուեց ճահճում և դեռ շատ պիտի հայրուի տպուելուց լետող: Կարող եմ հաստատապէս ասել ճահճին, որ երբէք Լէօների ոչ մի գրուածքը չիարժանանայ Շիրվանզադէի հայրուանքին կամ յարձակմանը թէկուզ այդ գրուածք լինի 1500 էջերից բազկացած:

Այս տողերով ես վերջ եմ տալիս բանակռուին, բաւական համարելով քրքրել ապականուած տիղմը...

ՄԵՆԱՒՈՐ

Ս. ԲԱՐԿՈՒՂԻՄԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԷՈՐԳԵԱՆ-ՃՈՒՂՈՒՐԵԱՆՑ ՎԱՂԱՐՉԱՊԱՏՑԻ

Ճումարի խմբագրութեան վերոյիշեալ հեղինակից ուղարկուած է «Խորենացոյն Խորենացով պէտք է հասկանալ ք»:

հ. 2 վերնագրով մի գրքուկի Գրքուկը չբացած՝ մենք սպասում էինք կարդալ թէ դեռ էլի ինչ անհեթեթ կարծիքներ պիտի լսենք մեր բազմաշարշար պատմագրի մասին: Բայց որքան մեծ եղաւ մեր զարմանքը, երբ 233 երեսից բաղկացած փոքրագիր մի գրքուկի 30 էր լատալարանը և 45 էր լաւելուածը = 5 եր. տեսանք նուիրուած զուտ անձնական հաշիւներին և սորան-նորան հարցոյելուն:

Շատ ուրախ եմ, որ սրբ. ձուղուրեանց — Վաղարշապատցին չէ մոռացել և իմ անձը և եպիսկոպոսին ոչ վայել բերանով բարբառել է... ինչ որ խելքը փչել է. իսկ այդ բամբասանքների կոտոր ամենայն փութկոտո թեամբ արտատպել էր «Մշակ» լրագիրը, որ ըստ օրինաց, անշուշտ նոյն փութկոտութեամբ պիտի հրատարակէ և մեր այս պատասխանը:

Չարժէր իսկապէս պատասխանել այդ անփաստ և կրքոտ հարցումներին, բայց զիջանելով մեր բարեկամների խորհրդին, ջախջախենք մի հարուածով այդ շէնքսը:

Ահա բանը ինչու մն է.—

Մեր խորագրութեամբ լոյս տեսած 1900 թ. «Լուսմայ»-ի Ա. գրքում տպուած էր հանգուցեալ գրագէտ և աստուածաբան Արշակ Տէր Միքէլեանի մը մատենախօսական լողուած լիչեալ նպիսկոպոս ս. ձուղուրեանի «Սորենացին» գրքի Ա. հատորի մասին, լողուածագրի ամբողջ ստորագրութեամբ:

Այդ լողուածը որքան էլ գրուած էր նպաստուոր ոճով, հաճելի չեղաւ ս. ձուղուրեանին և մի փոքր բանակոխ սկսեց Ա. Տէր Միքէլեանի հ'տ, նոյն 1900 թուի առաջին ամիսներում. գրեց «Արարատ» ում, պատասխան ընդունեց «Լուսմայում» և խնդիր փակուցեց «Լուսմայ»-ի խմբագրութիւնը և խմբագիրը այդ խնդրում կատարեալ չեղոք զիրք պահեցին, վասն զի մեր Տիրխնամ Պետութեան օրէնքով երբ լողուածագիրը հանդէս է գալիս իւր լիուլի ստորագրութեամբ և պատասխանատուութիւնը վերցնում իւր վերալ, խմբագրութիւնն արդէն ազատ է ամեն պատասխանատուութիւնից:

Անցան տարիներ, Ա. Տէր Միքէլեանը, այդ հուժկու գրիչը մեռաւ. էհ, ուրեմն այժմ կարելի է «Լուսմայ» խմբագրի «եախից պինդ բռնել» և բռնել է ս. ձուղուրեանը:

Եւ նա համարելով ինձ պատասխանատու և լանցաւոր Տէր Միքէլեանի լողուածը տպելու համար, մեղադրում է մի շարք լանցանքների մէջ, մտածելով, որ այդպիսով պիտի լաջողի մի ստուեր ձգել իմ անձնական կենցաղի և հասարակական գործունէութեան վերալ: Բայց վերլուծենք նորա մեղադրանքները.

Նախ լիչենք, որ ս. ձուղուրեանը ի զուր է կարծում թէ իւր գիրքը վազուց ուղարկուած էր Էջմիածնի տպարանից Տէր Միքէլեանին որ գզէր նորան. իրողութիւնն այս է. 1899 թուի վերջերը դպրոցական ծննդեան արձակուրդներին հանդ. Ա. Տէր Միքէլեանը Շուշուց եկել էր Քիֆլիս և իբրև մեր մշտա-

Վան աշխատակից՝ մտաւ «Լուսալուի խմբագրատուն. այդ պէտք է լինէր դեկտ. 24—26-ին. նորա ներկայութեամբ փոստը բերեց մեր խմբագրութեան անունով մի բանդերով, որ բանալով և տեսնելով պատմական գիրք է՝ Տէր-Մ. վերցրեց մի քանի խօսք գրելու նորա մասին: Եւ մի քանի օրից լեռու ստացանք լողուածը, որ և շարելով գտեղեցիք լուսնուար 1-ի գրքում: Ս. Ճուղուրեանը Ս. Էջմիածնի լճի ակից զուրս շրջած չլինելով ի հարկէ չէ կարող իմանալ, որ մի օրում հարիւրաւոր երեսներ են ոչ միայն տպում, այլ և շարուում, և սյուր խկ պ. Ռօտինեանցի տպարանը «Լուսալուի 100—150 երեսը երբեմն միայն մի օրում է տպում:

Այնուհետև սկսում է ս. Ճուղուրեանի 1001 գիշերները պատմութիւնը.—

1) Որ ես մեծ գծտութիւնների պատճառներ եմ տուել հանգ. կաթողիկոսի և Տփիսիսի առաջնորդ սրբ. Սեդրակեանի մէջ ինչ-որ ուրիշների ծխերին տիրանալու համար:

Եկեղեցու նուիրապետութեան մէջ այս ու այն կարգի ատեաններ են սահմանուած եկեղեցիին կառավարելու և եկեղեցու պաշտօնեաների մէջ ծագած վէճերը կարգադրելու համար: Միթէ, ս. Ճուղուրեան, եթէ մի զրկուած և չքաւոր քահանայ լւր ընտանիքը կառավարելու համար ծուխ է խնդրում իւր իշխանութիւնից, դա շահասիրութիւն է և անխղճութիւն, ինչպէս Դուք էք ակնարկում. իսկ որ ես զրկուած եմ եղել և քահանայադործութիւն անելով հանդերձ ընտանիքս պահել եմ լրագիրներ սրբագրելով, դասեր տալով և զանազան անձանց համար թարգմանութիւններ անելով, դա գաղտնիք չէ և նորն իսկ ինքը սրբ. Սեդրակեանը քաջ գիտենալով իմ դրութիւնը միշտ աշխատել է ազատել ինձ այդ վիճակից: Միթէ Դուք անշահասիրութիւն էք համարում, որ միևնոյն սեղանին ծառայող մի քահանայ 3—400 տուն ծուխ ունենայ, իսկ միւսը 50—60 և այն խիստ չքաւոր:

2) Որ ես ս. Էջմիածնի մատենադարանից իւրացրել եմ «Իլուան Հայոց պատմութեան» պատրաստ նիւթերը և այժմ էլ չկարողանալով իւրացնել Մանուէլ վարդապետի ինքնակենսագրութեան ձեռագիրը՝ արտագրել տարել եմ:

Նախ ստում է ս. Ճուղուրեան թէ ես «Իլուանի» պատրաստ նիւթեր եմ իւրացրել ս. Էջմիածնից. դա կեղտոտ զըրպարտութիւն է. ես այդ մասին բացատրութիւն տուել եմ օՁ. Ղարդ. կտակը և Մշակի դռանցանքները՝ բրօշուրիս մէջ և այժմ աւելորդ եմ համարում կրկնել այստեղ: Ընդհակառակը ես իմ ունեցած նիւթերս տպելով՝ բարագիրները հետզհետէ նուիրում եմ ս. Էջմիածնի մատենադարանին և ունիմ առ այդ Հայրապետական ապահովագրեր և շնորհակալեաց թղթեր, որի մասին մինչև անգամ պաշտօնապէս լայտարարուած է «Արարատ»-ում:

Այնուհետև սուտ է խօսում ս. Ճուղուրեանը, թէ «Ի-

ւաններիս նիւթերը միմիայն էջմիածնի մատենադարանից են քաղուած. այլ դոքս նաև իմ երեսնամեայ տաժաննիլի ճանապարհորդութեանց երկանց պտուղն են: Իսկ եթէ օգտուել եմ և էջմ. մատենադարանից, ամօթէ մինչև անդամալդ մասին բերան բանալը ս. ճուղուրեանի կցղմից, որովհետև նախ՝ մատենադարանները հէնց նորա համար են, որ նոցանից օգտուիլ և պիտանի հրատարակութիւններ տան, և արևուհտեա եթէ ինքը մեծախօս ճուղուրեանը 30 և աւելի տարիներ էջմիածնի հացը ուտելով, չէ բարեհաճել այդ թողոտ թղթերը դէթ մի անգամ աչքի անցնել, ինչո՞ւ ուրախ չէ որ ուրիշներն են նորա երեսը պարզ անողները... և դեռ գող էլ ենք դառնում: էջմիածնի մատենադարանին մենք դեռ 4200 ուրլու հաղուագիւտ գրքեր նուէր ենք անել տուել, խղիւղ ասացէք, դուք թնչ էք արել: էջմիածնի, ինչպէս նաև ամեն մի մատենադարանից օգտուելը ես ինձ համար մեծ պատիւ եմ հասարում և կարծեմ ոչ մի խելքը գլխին մարդ այդ բանում չի մեղադրի ինձ, թերես մի քիչ էլ կգովէ իմ ջանասիրութիւնը:

3. Որ Տ. Մակար կաթողիկոսին կողոպտող Իւկոբի գըրպանում գտնուած գումարից 4000 ու. ինձ պիտի հասնէր:

Ալտեղ, ս. ճուղուրեան, իսկ Ձեր բարբառելու տեղն է. մեր խելքը չէ հասնում թէ դա ինչ փող է և երբ ենք մի հատ կոպէկ ստացել մենք. բաւական պինդ երես պէտք է ունենալ մարդ, որ մէկին մեղադրէ չգիտցած ու չլսած լանցանքի մէջ: Եթէ մէկը որ և է ճանապարհով 10000 ու. գողէ և իրան արդարացնելու համար հռչակէ թէ այդ գումարը տալու է ս. ճուղուրեանին, մթթէ դորանով դուք լանցաւոր եղաք:

4. Որ ես հազարներ նստեցրի էջմ. գանձարանի վերայ ձուլիչ և արագատիպ մեքենաները, որոնց ատաջիւր իբրև անպէտք զօռոդա երկաթ՝ բերած օրից թափուած է տպարանի մի անկիւնում:

Ս. ճուղուրեանին, իբրև տպարանական գործին միանգամայն տգէտ անձի, պէտք է ներէի այս զրպարտութիւնը, բայց որովհետև դա ասուած է կատարեալ չարամտութեամբ, ուստի և չարունակենք մեր խօսքը:

1896 թուի գարնան Նորին Սրբութիւն Աղգիս Վեհ. Հայրապետը հրաւիրելով միզ ս. էջմիածին, հրամայեց, իբրև տպարանական գործին հմուտ անձի, զննել ս. էջմիածնի տպարանը և մի տեղեկագիր ներկայացնել իրեն լիշելով թէ ինչ նորանոր մեքենաներով հարկ կլինէր հարստացնել տպարանը: Հրամանը կատարելով՝ մատուցինք Նորին Սրբութեան մի ընդարձակ տեղեկագիր, լիշելով մէջը որ անհրաժեշտ են այս ու սրն մեքենաները և լատկապէս մի նոր արագատիպ և մի նոր սխտեմի ձուլիչ, որպիսին մենք տեսած էինք 1895 թուին Բերլինում: Սորա առաւելութիւնը հին ձուլիչից արն է, որ մինչդեռ հինը ձուլում էր պոչաւոր տառ, արևուհտեա պոչն էին կտրում, խարտոցում էր և մի քանի ձեռք անց-

նելուց լետող միայն պատրաստ էր գրաշարի ձեռքը տալու, նորքը, դորա հակառակ, ձուլում էր շարելու համար պատրաստ տառ։ Մեր տեղեկագրի միջ առաջարկեցինք Վեհին, որ այս բոլորի համար անհրաժեշտ կլինէր հրատարակել եւրոպայից մի մասնագէտ վարպետ որ կառավարէր տպարանը և ուսուցանէր տպարանական գործը Էջմիածնի սաներից ոմանց։

Վեհը հաւան գտնուելով իմ առաջարկութիւններին 1896 մարտ 12-ի № 369 կոնդակով լանուն իմ հրամայեց գնալ Եւրոպայի քաղաքները և ձեռք բերել կոնդակում լիշուած մեքենաները շնորհաբաժակելով զիրաւուն վարձել անդ զմի հմուտ տպարանագէտ գերմանացի միամեայ ժամանակաւ։

Թիֆլիսից դեռ չմեկնած դէպի Եւրոպա՝ նոր տարուայ լունիս 4-ին Վեհարանից գրաւոր պատուէր ստացալ գերմանացի մեքենագէտ բերելը առ այժմ լետածգել, որովհետև Թաւրիզից Էջմիածին է եկել մի երիտասարդ, որ լաւ մեքենագէտ է և աշխատած է Պօլսի տպարաններում և զոհարուցիչ է։

Գնացիւնք Եւրոպա և կատարեցինք մեզ տուած պատուէրները խղճի մտքով։ Միւսները թողնելով լիշենք այն երկու մեքենաները, որ ակնարկել է վերելք մեր անաչառ կենսագործը.— Ա. Վիւրցրուբի աշխարհահռչակ տպարանական մեքենագործարանից դնել ենք մի մեծադիր հոլակապ արագատիպ, որի ֆակտուրաները, մաքսի, ճանապարհածախսի և բոլոր միւս կարևոր դոկումէնտները ինչպէս նաև բոլոր գնած իրերի հաշիւները իւր ժամանակին հետզհետէ մատուցել ենք Նորին Սըրբութեան, որոնք ստուգուել են, ընդունուել և Հալբապետական օրհնութեան և ծալրագոյն շնորհակալական կոնդակների ենք արժանացել (26 և 30 հոկտ. 1896 № 1448 և 1463, և 20 լունիսի 1897 № 622)։ Բ Բերլինի Ախտէրման» գործարանից գնեցի ձուլիչ նոր սխտէմի մեքենան. գնելիս ինքը պ. Կիւստէրմանը ասաց, որ այս մեքենան ընդամենը երկու տարի է հնարել է ինքը և դեռ ամենքը չգիտեն սարքելն ու գործածելը. և ունի ալնպիսի նրբութիւններ, որ անհրաժեշտ կլինի մեր կողմից մի ամսով մի անձ ցուց տալ իրան, որ տեղն ու տեղը գործարանում սովորէ «լը մեքենայի բոլոր հանգամանքները և Էջմիածին գնալով՝ սարքէ ու բանեցնէ. ես անմիջապէս դրեցի Էջմիածին, որ թող տան կոնդակի իմաստով մի վարպետ վարձել Եւրոպա, բայց պատասխան չստանալով վերադարձալ, խոստանալով Կիւստէրմանին, որ ինչ որ կկարգադրուի կիմացնեմ իրան հետևանքի մասին։

Բոլոր մեքենաներն եկան, բայց Կիւստէրմանը ձուլիչը չուղարկեց, հեռագիրներով և նամակներով պահանջում էր մարդ նշանակել, որ սովորցնէ մեքենայի նոր կազմութիւնը և գործադրութեան եղանակը և ապա կուղարկէ։ Վեհը հրամայեց ինձ գլխի Լալպիցիք բարեկորդ Գարեգին վարդապետ Յովսէփեանին, որ գնալ Բերլին և սովորէ այն ու զայ Էջմիածին մեքենան գործածէ։ Հ. Կարեգինը դնաց, փորձեց սովորել։

դարձաւ Էջմիածին, բայց չլաջողեց մեքենան գործ դնել. Էջմիածնի վարպետն էլ չէր կարող ի հարկէ գործ ածել մեքենան, որովհետեւ իւր կեանքում տեսած չէր ալնպիսին և չէր ուսած: Այդ սկիւտերմանի՞ հաշկաւոր ձուլիչ մեքենան, որ 1896 թուականին մինք ի ցոլց դրուած տեսաք Բերլինի Արհեստգիտական ցուցահանդիսում իբրև նորութիւն, ով կիւստէրման, ս. ձուղւրեանն ասում է, որ ալժմ ինչպէս զոռոգա երկաթ թափուած է տպարանի մի անկիւնում: Ս. ձուղուրեանն, ոչ թէ միայն կիւստէրմանի ձուլիչը, այլ ամբողջ գործարաններ երկաթէ զոռոգա կղաւնան, եթէ հմուտ գործադրող չունենան. «խաչը Տէրը զօրաւոր կանէ», հասկացաք.

Այս բացատրութիւնից լետոյ միթէ էլի հարկ կալ ձեզ ասելու, որ անխիղճ զրպարտող էք և ուրիշ ոչինչ:

Յօդուածի վերջումն էլ ինչ որ վարդապետական ակնարկներ է անում ս. ձուղուրեանը մեր մասին, առանց մի վարկեան մտածելու, որ ալոպիսի անդուռն բերանով լարձակումներ է գործում ա. Գիւտի վերայ նորա համար, որ վերջինների նսանները խոշոր խոշոր գումարների կտակներ են անել տալիս լօգուտ Էջմիածնի, իսկ ս. ձուղուրեանի նմանները (կարծեմ թէ իւր. նմանը միայն ինքն է) 30 և աւելի տարիներ ալդ գումարները վախելում են, անգործութեամբ տարիներ անցնելով, ոչ մի պաշտան չվարելով և ամբողջ ժամանակը բամբասանքի նուիրելով: Այն, մեղաւոր ենք մենք Ձեր առաջ, ս. ձուղուրեան:

Մենք կարող էինք ալստեղ վերջացնել մեր ասելիքը, բայց որովհետեւ ս. ձուղուրեանը փորձել է մի անլաջող կենսագրութիւն գրել մեր անցեալից, մենք ապերախտ չգտնուելու համար՝ փորձենք նորա մի լաջող կենսագրութիւնը առաջ բերել ալստեղ, քաղելով 1881 թուի «Արարատ»-ի № 10 ի Սինօզի օրագրութիւններից:

Շի 29 Հոկտեմբերի 1881 ամի ի վաղուց անտի Բարթուղիմէոս վարդապետն միաբան Սրբոյ Աթոռոյս ըմբոստ և չարազրդիւ բնաւորութեամբ իւրով դարձուցեալ է առ ինքն զուլաղրութիւն Վեհափառ Հայրապետի Ազգիս: Թէև բազմիցս ի կիր արկան մեղմ միջոցք համոզման և խրատուց առ ի բաց կացուցանել զնա ի վատթար բնաւորութենէն և ի վարուց, սակայն ի դերև և ելին ամենալն ջանք Մայրազոյն Հոգևոր իշխանութեան, և գողցես անհնարին եղև ի զգաստութիւն ածել զնա: Իսկ ի մօտոյ լանդգնութիւն նորա Լանց քան զլափն՝ լոխորտալով անգամ ի վերայ Անդամոց Սինօզիս: Իհե ի 1872 ամի, մինչ սարկաւադ էր, թող ետ անձին միջատել ի գործ վանական կառավարութեան Սրբոյ Աթոռոյս և անձնակամ զջուրս անտառի Մայր Աթոռոյս լափշտակեալ՝ հասուցանելով վէրս ի գլուխ լալնժամեան անտառապահի, տուեալ էր եղբարց իւրոց լոռոգանել զանդաստանս իւրեանց: Բայց գթացեալ Նորին Վեհափառութեան կաթուղիկոսի ամենալն Հայոց

լերիտասարդական անփորձ հասակ նորա, և տածելով զլուստակաւ ուղղութեան նորա լապաղալին՝ Հայրաբար ներեաց նմա լանդիմանելով և պատուիրելով լամենայնի կալ ի հնազանդութեան և ի զգաստութեան և ի կանոնի միաբանական կենաց: Եւ լետ ձեռնադրութեան լաստիճան կուսակրօն քահանայութեան, և զկինի անցանելոյ սակաւ միջոցաց, ըստ խնդրանաց Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոսի առաքեցաւ Բարթուղիմէոս վարդապետն ի Դավրէժ լուսուցչութիւն ի զպրօցին Հալոց, որ ի վարեն և զփոխանորդական պաշտօն ի վիճակին Ատրպադանական ի բացակայութեան Անդրէաս Արքեպիսկոպոսի ի Մայր Աթոռոջ՝ նշանաւոր անձինք հայկազունք ի Դաւրիժոյ բողոք բարձեալ առ Վեհափառ Հայրապետն Ազգիս ամբաստանեցին զԲարթուղիմէոս վարդապետէ չաղազս անբարոյական գնացից նորա, զորպիսեաց ամբաստանեալ էր արդէն քանիցս և ի սարկաւազութեան իւրում: Եւ առ ի խաղաղել զլուսմունս Պարսկահայ մերս գնեաց՝ բարեհաճեցաւ Նորին Վեհափառութիւնն հրամայել Անդրէաս Արքեպիսկոպոսի կոչել զնա սուր ի Ս. Աթոռս: Յօրէ լայնմանէ հակառակ կուսակրօնական և միաբանական ուխտին լաճախեաց և լաւել նոր ի նորոյ ի կիր առնուլ զիւր բնածին զանպատեհ արարս ըստ վարուց և ընթացից իւրոց, որպէս և ի ներկայումս կեղծելով զանցս ինչ ի Վեհարանի՝ իբր զի մի ոմն ի միաբանակցաց իւրոց սպառնացեալ իցէ կենաց նորա, և առ ոչինչ գրեալ զվանական կարգ և զկանոն և կեղեցական պարտաւորութեանց և զիրաւունս ընդհանուր Գլխոյ Ազգիս և Եկեղեցւոյ Հայաստանեաց՝ անմիջապէս դիմեալ է լուսիկանութիւն Վաղարշապատայ՝ ամբաստանելով զմիաբանակցէն իւրմէ. առ որ Նորին Վեհափառութիւնն կամելով վերջին անգամ ի կիր առնուլ զմիջոց ինչ լուղղութիւն նորա և զգաստութիւն՝ հրամայեաց Սինօզիս առաքել զնա ի վանս Խորվիրապու լապախարութիւն անսահման ժամանակաւ: Վասնորոյ Սինօզս ի 21 ներկալ ամսուս օրագրեաց և տնօրինաց՝ լետ ի ժողով գումարելոյ զմիաբանս Սրբոյ Աթոռոյս կոչել զԲարթուղիմէոս վարդապետն լլտեան Սինօզիս վասն լալտնելոյ նմա զհրաման Նորին Վեհափառութեան, սակայն լետ երիցս հրաւիրման միջոցաւ Բարե Գալեգին վարդապետի Մաթուռեանց Անդամոյ վանքական կառավարութեան և Շաթիր Յարութիւնի Մարդարեան զանաղան պատճառաբանութեամբ բացէ ի բաց հրաժարեցաւ իսպառ Բարթուղիմէոս վարդապետն լանդիման լինել լատենի լաւելլով բանս անպատշաճ՝ առանց գիտելոյ թէ՛ առ ինչ կոչեն ի Սինօզս. ուստի ընթերցեալ զօրագրութիւն Սինօզիս ի լուր Միաբանից, ապա համալեցաւ Անդամոց Վանքական կառավարութեան առաքել զԲարթուղիմէոս վարդապետն ի տեղի ապախարութեան. բայց նա կրկին անսաստեալ հրամանի իշխանութեան՝ խոյս տուեալ է ի սենեկէ իւրմէ և նախ ի բնակութիւն Կլւրեղ վարդապետի և ապա առ Սրեմիա Ս-

պիսկոպոսն փութացեալ է և հակառակ կացեալ է երիցս հրաւիրման և սզդարարութեան Անդամոյ վանքական Կառավարութեան, և հուսկ լետոյ ձեռքակալելն զնա սուրհանդակաց Մար Աթոռոյս՝ լանդգնեալ է նա ի պալքար մտանել և նախարձակ լեալ, ջանացեալ է բռնցել և ապտակել զսուրհանդակս Ուստի ի զեկուցանելն զաւստ ամենայնէ՝ Նորին Վեհափառութիւն լաւել հրամայել Սինոդիս ի ձեռն վանահօր խորվիրապու առնուլ ի Բարթուղիմէոս Վարդապետէ զվեղար, զփրլոն և զվարդապետական խաչն ականակուռ ընդ վկայական կոնդակին Հայրապետականի և բերել արթ ի Սինոդս, (որ և անեալ եղև ի կատար)։

ԳՒԻՑ Ա. ԳԱԷ. ԱՂԱՆԵԱՆՅ

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՋՂԶՈՒՄՆ

Նոր տարուց առաջ Միացեալ Նահանգների համաժողովի անդամ պ. Բրունը, Վիսկոնսին նահանգի պատգամաւորը, մտաւ փոստ իւր անուան թղթակցութիւններ ստանալու համար Պ. Բրունը լրագիրների, նամակների և շնորհաւորական քարտերի հետ միասին ստացաւ մի ապահոված փոքր ծրար, որը ստանալուն պէս իսկույն բաց արեց, կարծելով թէ դա իրան համակրող ընտրողից կամ ընկերից անակնկալ ընծայ կ'լինի։ Կարող էք երևակայել նորա զարմանքը և սարսուփը, երբ ստուարաթղթէ արկղի լատակի վրայ նա տեսաւ խնամքով փաթաթուած արիւնոտ ձեռք։ Զարագած ալք զարշելի խաղից, նա դէն ձգեց ձեռքը և այն է ուղում էր գնալ լալտնել ոստիկանութեան բայց, նկատելով արկղի մէջ մի խուղթ, կարդաց և, ի մեծ զարմանս ներկայ եղողների, զգուշութեամբ վերցրեց զգուանքով դէն ձգած իրը և լարգանքով դրեց դարձեալ ստուարաթղթի փոքրիկ դազաղի մէջ։ Անա ալք նամակի պարունակութիւնը։

«Փանկագին անդամ վեհաժողովի. եօթը տարի է ինչ ես կախ եմ մղում իմ լրագրի մէջ ձեր թեկնածութեան, ձեր քաղաքական կարծիքների և ձեր անձի դէմ. ես ձեր ամենախիստ և ահարկու հակառակորդն եմ եղել շատ չարութիւն եմ արել ձեզ և շատ լանցաւոր եմ ձեր առաջ. ես գործում էի համոզմունքով, երբ ձեր դէմ կազմեցի հակառակորդների մի խումբ. և հպարտանում էի դրանով. երբ համոզուեցի իմ հայեացքների սխալականութեան մէջ, դարձեալ շարունակում էի լարձակուիլ ձեր վերայ արդէն կամակորութեանս և թուլ ընաւորութեանս պատճառով։ Ալքպէս շարունակուեց երեք